սույն փաստաթուղթը հանդիսանում է «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ սեփականությունը,
բաղկացած է 30 (երեսուն) էջից

Հաստատված է «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
Տնօրենների խորհրդի 11 դեկտեմբեր 2023 թվականին
կայացված թիվ 231211 որոշմամբ

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Բովանդակություն

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

Մեր Արժեքները 4

Ո՞Ւմ է վերաբերում այս Կանոնակարգը 4

1. Երբ հարցը վերաբերում է մեր աշխատակիցներին 5
2. Երբ հարցը վերաբերում է այլ անձանց հետ հարաբերություններին 8
3. Երբ հարցը վերաբերում է պետության եւ պետական պաշտոնյաների հետ հարաբերություններին 15
4. Երբ հարցը վերաբերում է հաղորդակցությանը, տեղեկատվության փոխանակմանը եւ գաղտնիությանը 18
5. Երբ հարցը վերաբերում է «Տելեկոմ Արմենիա»-ի ակտիվների պաշտպանությանը 21
6. Երբ հարցը վերաբերում է սույն Կանոնակարգի կիրառմանը 25

ՎԵՐԱՆԱՅՈՒՄ 26

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նպատակը

Սույն Վարվելակերպի Կանոնակարգը (հետագա տեքստում՝ «Կանոնակարգ») սահմանում է կարեւորագույն բնագավառներում սկզբունքները եւ դրանց շրջանակը, ներառյալ մեր բացարձակ անհանդուրժողականությունը կաշառակերության կամ կոռուպցիալի նկատմամբ, որը կօգնի մեզ համատեղ առաջ մղել մեր արժեքները:
Կանոնակարգի բացարձակ սեփականատերն է Գլխավոր տնօրենը, որը լիազորում է Կոմպլայենսի և ռիսկերի կառավարման բաժնի, մարդկային ռեսուրսների կառավարման եւ իրավաբանական տնօրինությունների պատասխանատուներին մեկնաբանել Կանոնակարգի դրույթները եւ ապահովել վերջինիս պահանջների կատարումը:

Սիրելի թիմակիցներ,

«Տելեկոմ Արմենիա»-ն Հայաստանի խոշորագույն ընկերություններից է, ու այս ընկերության գլխավոր հարստությունը հենց Դուք եք: Ուստի այս կանոնակարգը շատ կարեւոր է, քանի որ սահմանում է մեր աշխատանքային հարաբերությունների հիմնական կանոնները:
Փոխադարձ հարգանքը եւ ընդհանուր արժեքներն այն հիմքն են, որը մեզ թույլ է տալիս հանդես գալ միահամուռ կերպով որպես հզոր թիմ՝ միավորված մեծ նպատակներով: Այս կանոնկարգը չի պարունակում որեւէ դրույթ, որը մեզ բոլորիս համար ծանոթ կամ հարազատ չէ: Այն ընդամենը կոչված է ամրագրելու եւ փաստելու մեր արժեհամակարգը եւ աշխատանքի, գործընկերների ու հաճախորդների հանդեպ մեր վերաբերմունքը:
Վստահ եմ, որ մենք որպես մեկ թիմ ունենալու ենք բազմաթիվ հաղթանակներ:

Հայկ Եսայան
Գլխավոր տնօրեն
«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ

Մեր Արժեքները

Առաջադեմ

Մենք բարձր տեխնոլոգիաների ոլորտի առաջամարտիկներն ենք: Մենք առաջինն ենք ներդնում նորագույն տեխնոլոգիաները, առաջարկում **նորարարարական** լուծումներ ու բիզնեսի մոդելներ՝ ծառայեցնելով դրանք մարդկանց կյանքի բարելավմանն ու հեշտացմանը:

Թիմային

Մենք միասնական ենք, ամուր ու ուժեղ: Մենք համախմբվել ենք ընդհանուր արժեքների, երազանքների ու գաղափարների շուրջ: Մենք հավատում և կյանքի ենք կոչում բոլորիս երազանքները միասին՝ արհեստավարժ թիմակիցների շնորհիվ:
Մենք բարձր մարդկային արժեքների կրողներ ենք, **ազնիվ ենք** մեկս մյուսի ու մեր հաճախորդների նկատմամբ, ովքեր մեր մեծ թիմի անդամ են:
Մեր յուրաքանչյուր թիմակից իրենից բացառիկ արժեք է ներկայացնում, սակայն մեր ուժը՝ **միասնության** մեջ է:

Ու՞մ է վերաբերում այս Կանոնակարգը

Սույն Կանոնակարգը վերաբերում է «Տելեկոմ Արմենիա»-ի բոլոր աշխատակիցներին (այդ թվում ժամկետային և պայմանագրային), տնօրեններին, պաշտոնատար անձանց և խորհրդի անդամներին: Մենք նաև ակնկալում ենք, որ բոլոր այն անձինք, ում հետ
աշխատում ենք, այդ թվում՝ գործակալները, ներկայացուցիչները, միջնորդները կամ «Տելեկոմ Արմենիա»-ի համար կամ վերջինիս անունից գործելու լիազորություն ունեցող այլ երրորդ կողմերը, կհետևեն և կենթարկվեն նմանատիպ վարքագծի չափանիշներին:

սույն փաստաթուղթը հանդիսանում է «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ սեփականությունը, բաղկացած է 30 (երեսուն) էջից

1. Երբ հարցը վերաբերում է մեր աշխատակիցներին

Մեր ուժը մեր մարդկանց մեջ է: Մենք հարգում ենք բոլորի իրավունքները և արժանապատվությունը և հավատում ենք, որ բազմազանությունը մեր մրցունակության գրավականն է: «Տելեկոմ Արմենիա»-ն մշտապես պահպանում է հարգանքի, փոխադարձ վստահության, համագործակցության և ազատ հաղորդակցության միջավայր:

Բազմազանություն եւ ընդգրկվածություն

«Տելեկոմ Արմենիա» -ն նպաստում է բազմազանությանը, հարգանքին, ընդգրկվածությանը եւ բոլորի համար հավասար աշխատանքային հնարավորություններ ապահովելուն: Մենք պահպանում ենք անվտանգ եւ արհեստավարժ աշխատանքային միջավայր եւ չենք հանդուրժում որեւէ տեսակի ճնշում կամ ոտնձգություններ:
Մենք հետեւում ենք աշխատանքային բնագավառի բոլոր գործող օրենքներին ամենուրեք, որտեղ գործում ենք, եւ պարտադիր կերպով հետեւում ենք, որ համալրման, ընտրության, զարգացման եւ առաջխաղացման մեր որոշումներն ընդունվեն իրական արժանիքների, որակավորման, հմտությունների, ձեռքբերումների եւ պոտենցիալի հիման վրա: Մենք հարգում ենք մարդու հիմնարար իրավունքները եւ թույլ չենք տալիս այնպիսի գործոններին, ինչպիսիք են. ռասայական, կրոնական, գենդերային պատկանելիությունը, տարիքը, ազգային ծագումը, սեռական կողմնորոշումը, ամուսնական կարգավիճակը կամ հաշմանդամությունը, ազդել մեր դատողության վրա:
Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ "Խտրականության դեմ և հավասար հնարավորությունների ընթացակարգը", "Աշխատավորների Կազմակերպությունների քաղաքականությունը" և "Կրճատման քաղաքականությունը":

Ոտնձգություն

Տելեկոմ Արմենիա-ն չի հանդուրժում որեւէ տեսակի անպատշաճ պահելաձեւ կամ վարք, որը նվաստացուցիչ է, ահաբեկող կամ թշնամական, կամ անհիմն կերպով խոչընդոտում է աշխատանքի կատարմանը: Մենք մեր աշխատակիցներից ակնկալում ենք այլ անձանց նկատմամբ դրսեւորել հարգալից վերաբերմունք եւ խուսափել այնպիսի իրավիճակներից, որոնք կարող են համարվել ոչ պատշաճ: Օրինակ. «Տելեկոմ Արմենիա»-ն արգելում է հետեւյալ տեսակի վարքագիծը՝

- վիրավորական կամ կոպիտ խոսքեր
- բաց սեռական բնույթի կամ նվաստացուցիչ արտահայտություններ կամ պատկերներ
- անպարկեշտ կամ վիրավորական ժեստեր
- անցանկալի սեռական ոտնձգություններ կամ կատակներ
- ահաբեկող կամ սպառնացող վարք
- վտանգավոր, ճնշող վարք, բռնություն կամ նման վարքի սպառնալիք

Դուք միշտ կարող եք դիմել մարդկային ռեսուրսների կառավարման եւ կազմակերպության զարգացման տնօրինության կամ Կոմպլայենսի և ռիսկերի կառավարման պատասխանատուներին, ինչպես նաեւ օգտվել կոմպլայենսի և ռիսկերի կառավարման SpeakUp թեժ գծից՝ ցանկացած մտահոգություն հայտնելու համար (հաղորդման հասանելի միջոցները ներկայացված են սույն Կանոնակարգի 6-րդ ենթաբաժնում):
Լրացուցիչ տեղեկությունների համար տես "Սեռական ոտնձգությունների կանխարգելման քաղաքականությունը" և "Գենդերային հիմունքով բռնության կանխարգելման քաղաքականությունը":

Առողջ եւ ապահով աշխատանքային միջավայր

«Տելեկոմ Արմենիա»-ն տրամադրում է ապահով եւ անվտանգ աշխատավայր եւ բարձրացնում է անվտանգության պոտենցիալ ռիսկերի մասին իրազեկման, ինչպես նաեւ, վերջիններիս կառավարման մակարդակը: Մենք խուսափում ենք ոչ անվտանգ գործողություններից եւ օգնում ենք ապահովել մեր եւ մյուսների անվտանգությունը:

Մեզ մոտ խստիվ արգելված է ապօրինի նյութերի վաճառքը, պահելը, տարածումը կամ օգտագործումը, ինչպես նաեւ աշխատանքային վայրում դեղատոմսով դուրս գրվող դեղերի չարաշահումը: Արգելվում է աշխատել այնպիսի թմրամիջոցների, ալկոհոլի կամ այլ նյութերի ազդեցության տակ, որոնք կարող են թուլացնել ապահով եւ արդյունավետ աշխատելու Ձեր ունակությունը կամ կարող են անհարմար դրության մեջ դնել կամ վնաս պատճառել
«Տելեկոմ Արմենիա»-ին: Եթե հայտնվեք այնպիսի իրավիճակում, որն անվտանգության առումով մտահոգություն է առաջացնում, կամ զգաք, որ Դուք կամ Ձեր որեւէ գործընկերն աջակցության կարիք ունի, դիմեք Ձեր անմիջական ղեկավարին կամ մարդկային ռեսուրսների կառավարման եւ կազմակերպության զարգացման տնօրինությանը: Մենք պատրաստ ենք օգնել

եւ աջակցել Ձեզ: Մենք պահպանում ենք գաղտնիությունը:
Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ "Աշխատանքի անվտանգության և առողջապահության քաղաքականությունը":

Մենք հետեւում ենք շրջակա միջավայրի պաշտպանությանը վերաբերող գործող օրենսդրությանը եւ ձգտում ենք նվազեցնել մեր գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի եւ առողջության վրա՝ պատասխանատու կերպով օգտագործելով բնական ռեսուրսները եւ նվազեցնելով թափոնների եւ արտանետումների քանակը:
Լրացուցիչ տեղեկությունների համար տես ընկերության բնապահպանական և սոցիալական գործառույթները կարգավորող քաղաքականությունները և ընթացակարգերում:

Անձնական հարաբերություններ

Հետեւելով գաղտնիության պահպանման իր սկզբունքներին՝ «Տելեկոմ Արմենիա»-ն սովորաբար չի հետաքրքրվում անձնական հարաբերություններով, եթե այդ հարաբերությունները բացասաբար չեն անդրադառնում աշխատանքի արդյունավետության կամ «Տելեկոմ Արմենիա»-ի հեղինակության կամ բիզնես շահերի վրա: Կոլեգաների միջեւ ռոմանտիկ հարաբերությունները կարող են բարդ լինել եւ կարող են սխալ հասկացվել: Հետեւաբար, եթե Դուք ռոմանտիկ հարաբերությունների մեջ եք որեւէ գործընկերոջ հետ, խուսափեք խնդիրներից՝ խորհուրդ հարցնելով Ձեր անմիջական
ղեկավարից կամ մարդկային ռեսուրսների կառավարման եւ կազմակերպության զարգացման տնօրինությունից: Թափանցիկ եւ ազնիվ գործելը չափազանց կարեւոր է: Տեղեկատվությունը պատշաճ կերպով բացահայտեք եւ խորհուրդ հարցրեք:

Հարց եւ պատասխան. Երբ հարցը վերաբերում է մեր աշխատակիցներին

Հ. Ինչ կարող է գործնականում նշանակել «հարգանքի, փոխադարձ վստահության, համագործակցության եւ բաց հաղորդակցության միջավայրի պահպանումը»:
Պ: Նախ եւ առաջ, վարվեք ուրիշների հետ այնպես, ինչպես կցանկանայիք, որ Ձեզ հետ վարվեն: Սա Կանոնակարգում սահմանված կանոններից եւ օրենքից վեր է:

Օրինակ.

- Մի՛ վերագրեք Ձեզ որեւէ մեկի աշխատանքը;
- Մի՛ ձայնագրեք խոսակցությունները կամ հանդիպումներն առանց մարդկանց տեղյակ պահելու (որոշ երկրներում սա անօրինական է եւ մշտապես համարվում է վստահության չարաշահում);
- Մի՛ բացահայտեք գաղտնիքները;
- Հարգե՛ք անձնական ժամանակը (որքանով հնարավոր է)
- Խրախուսե՛ք կարծիքներ հայտնելը, այդ թվում նաեւ տարբերվող տեսանկյունները եւ գաղափարները;
- Լսե՛ք:

Հ. Իմ ղեկավարը երբեմն գործում է այնպես, որ դա ինձ ստիպում է անհարմար զգալ. նա հրավիրում է ինձ խմելու, կամ զրույցներ է սկսում սիրային հարաբերությունների մասին, երբ շուրջը մարդ չկա: Ինչպե՞ս վարվել:
Պ. Եթե Ձեր ղեկավարի պահվածքն անցանկալի է, լավագույն լուծումն այդ մասին բացեիբաց խոսելն է Ձեր ղեկավարի հետ: Հնարավոր է, որ Ձեր ղեկավարն անտեղյակ է այն մասին, որ այսպիսի պահվածքն անհանգստացնում է Ձեզ: Այնուամենայնիվ, եթե Ձեր ղեկավարի հետ այդպիսի քննարկումը չի օգնում, կամ, եթե ինքներդ անհարմար եք զգում ուղղակիորեն քննարկել այդ հարցը Ձեր ղեկավարի հետ, ապա կարող եք հարցը բարձրացնել մարդկային ռեսուրսների կառավարման եւ կազմակերպության զարգացման տնօրինությանը կամ կարող եք օգտվել Կոմպլայենսի և ռիսկերի կառավարման SpeakUp թեժ գծից (հաղորդման հասանելի միջոցները ներկայացված են սույն Կանոնակարգի 6-րդ ենթաբաժնում):

2. Երբ հարցը վերաբերում է այլ անձանց հետ հարաբերություններին

Այլ անձանց հետ մեր հարաբերություններում, լինեն գործընկերներ, մատակարարներ, հաճախորդներ կամ այլ անձինք, «Տելեկոմ Արմենիա»-ն կիրառում է հարգանքի, էթիկական նորմերի եւ ազնվության միատեսակ բարձր

ստանդարտներ:
Մեր վարքը կարող է անդրադառնալ եւ ազդել մեր հեղինակության եւ մեր կազմակերպության վրա:
«Տելեկոմ Արմենիա»-ն շարունակաբար ձգտում է պահպանել իր դիրքը մեր հասարակությունում եւ ոլորտում որպես պատասխանատու եւ էթիկական նորմերին համապատասխան գործող եւ դրական անդամ: Դուք միշտ պետք է հիշեք սա Ձեր գործողություններում, վարքում եւ ելույթներում:

Կոմպլայենսին եւ կոռուպցիայի դեմ պայքարին վերաբերող օրենքներ

«Տելեկոմ Արմենիա»-ն հետեւում է կաշառակերության եւ կոռուպցիայի դեմ պայքարի բոլոր գործող օրենքների պահանջներին: «Տելեկոմ Արմենիա»-ն բացարձակ անհանդուրժողականություն է ցուցաբերում կաշառակերության կամ կոռուպցիայի ցանկացած տեսակի նկատմամբ, անուղղակի կամ «Տելեկոմ Արմենիա»-ի անունից բիզնես վարող որեւէ անձի կողմից: Մենք ակնկալում ենք նույն բացարձակ անհանդուրժողականությունը ցանկացած անձից, ով աշխատում է մեզ համար կամ մեզ հետ: «Տելեկոմ Արմենիա»-ի անունից գործող ոչ մի աշխատակից կամ երրորդ կողմ բիզնես գործարքների հետ կապված չի կարող
կոռումպացված կերպով ուղղակիորեն կամ անուղղակի կերպով առաջարկել, խոստանալ, տրամադրել կամ թույլատրել գումարի կամ որեւէ այլ արժեքավոր իրի տրամադրում որեւէ մեկին՝ բիզնես ձեռքբերելու կամ պահպանելու, կամ «Տելեկոմ Արմենիա»-ի համար ապօրինի առավելություն ստանալու նպատակով: Ոչ ոք չի ենթարկվի պաշտոնի իջեցման, որեւէ մեկի նկատմամբ չի կիրառվի տուգանք կամ ոչ ոք չի կրի բացասական հետեւանքներ՝ կաշառք տալուց հրաժարվելու համար, նույնիսկ եթե այդ հրաժարումը կարող է հանգեցնել բիզնեսի համար կորցրած հնարավորության:
Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ "Կաշառակորության և կոռուպցիայի դեմ պայքարի մասին քաղաքականությունը":

Նվերներ եւ գործնական հյուրընկալություն

Համեստ նվերները եւ գործնական հյուրընկալությունը (օրինակ՝ սուրճի հյուրասիրություն կամ բրենդավորված գրիչ) հաճախ դիտվում են որպես նորմալ եւ քաղաքավարի քայլ: Սակայն, որոշ տեսակի նվերներ եւ գործնական հյուրընկալություն, որոնք շռայլ են և անհամաչափ, կարող են հանգեցնել ոչ պատշաճ ազդեցության եւ կարող են դիտվել որպես կաշառք: Ոչ պատշաճ նվերները եւ գործնական հյուրընկալությունը կարող են վնասել

«Տելեկոմ Արմենիա»-ի հեղինակությանը եւ կարող են հանգեցնել ընկերության նկատմամբ տուգանքների, տույժերի կամ այլ պատժամիջոցների կիրառմանը: Մենք չենք առաջարկում նվերներ կամ գործնական հյուրընկալություն, եթե ստացողի բիզնեսի կանոններով կամ օրենքներով արգելվում է դրանց ընդունումը: Էլ ավելի խիստ կանոններ են կիրառվում պետական պաշտոնատար անձանց, կառավարությունների, պետական գործակալությունների կամ պետությանը պատկանող կամ պետության կողմից վերահսկվող բիզնեսների հետ աշխատելիս:
Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ "Կաշառակորության և կոռուպցիայի դեմ պայքարի մասին քաղաքականությունը":

Արդար գործելու պատասխանատվություն

Մենք արդարացի ենք վերաբերվում մեր հաճախորդներին, բիզնես գործընկերներին եւ մրցակիցներին: Մենք անազնիվ կերպով չենք օգտվում որեւէ մեկից՝ գաղտնի տեղեկատվության որեւէ սխալ մեկնաբանության, մանիպուլյացիայի, թաքցնելու, չարաշահման, խարդախության կամ այլ անարդար բիզնես պրակտիկայի միջոցով: Մենք մեր բիզնես գործարքներում ազնիվ ենք, արդար վերաբերմունք ենք ցուցաբերում մեր
հաճախորդների, մրցակիցների եւ բիզնես գործընկերների նկատմամբ եւ հարգում ենք նրանց իրավունքները:
«Տելեկոմ Արմենիա»-ն ենթարկվում է մրցակցությանը վերաբերող գործող օրենքներին (որոնք հայտնի են նաեւ որպես հակատրեստային կամ հակամենաշնորհային օրենքներ): Մրցակցությանը վերաբերող օրենքները ամբողջ աշխարհում արգելում են հակամրցակցային համաձայնագրերը, գերիշխող դիրքի չարաշահումները եւ որոշակի այլ գործողություններ: Գաղտնի համաձայնությունը եւ համաձայնությունները կամ քննարկումները, որոնք առաջ են բերում մրցակցության հետ կապված խնդիրներ, օրինակ՝ գների ամրագրում, շուկայի բաժանում, գնային գաղտնի համաձայնություն, միշտ անօրինական են եւ չեն կարող արդարացվել: Դուք չպետք է երբեւէ մասնակցեք նման տեսակի համաձայնություններին կամ քննարկումներին, քանի որ դրանք կարող են հանգեցնել իրավական պատասխանատվության եւ պոտենցիալ խոշոր տուգանքների: Եթե որեւէ մտահոգություն կամ հարց ունեք, դիմեք իրավաբանական կամ Կոմպլայենսի և ռիսկերի կառավարման հարցերով պատասխանատուներին:

«Տելեկոմ Արմենիա»-ն հարգում է մտավոր սեփականության իրավունքները: Մենք օգտագործում ենք միայն այն նյութերը, այդ թվում տպագիր նյութերը, տեսանյութերը, համակարգչային ծրագրերը, երաժշտությունը, արվեստի

ստեղծագործությունները, լուսանկարները եւ այլ մտավոր սեփականությունը, որն ինքներս ենք ստեղծել կամ օրինական կերպով ձեռք ենք բերել իրավասու կողմերից:

Փողերի լվացման կանխարգելում եւ դրա հետ կապված գործողություններ

«Տելեկոմ Արմենիա»-ն չի հանդուրժում որեւէ տեսակի փողերի լվացում կամ ահաբեկչության ֆինանսավորում: Փողերի լվացումն այն է, երբ անհատները կամ իրավաբանական անձինք փորձում են անել այնպես, որ քրեական գործունեությունից ստացված միջոցները օրինական թվան:

«Տելեկոմ Արմենիա»-ի ապրանքների կամ ծառայությունների փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով հետագա օգտագործումը կանխարգելման համար Դուք պետք է իմանաք փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի երկրում գործող պահանջները եւ հետեւեք ընկերության Կոմպլայենսի և ռիսկերի ընթացակարգերին եւ հրահանգներին: Դուք պետք է հետեւեք համապատասխան համալիր ստուգման ընթացակարգերին, որպեսզի հասկանաք պոտենցիալ բիզնես գործընկերների բիզնեսը եւ դրա վերաբերյալ տեղեկատվությունը, պարզեք նրա միջոցների ծագումը եւ նպատակային նշանակությունը: Ցանկացած կասկածելի գործարքների կամ միջադեպերի մասին անհրաժեշտ է տեղեկացնել Կոմպլայենսի և ռիսկերի կառավարման պատասխանատուներին:

Բիզնես գործընկերների հետ հարաբերություններ

Մենք հարաբերություններ ենք ձեւավորում հեղինակավոր, կոմպետենտ բիզնես գործընկերների հետ, որոնք պատրաստ են հետեւել Բիզնես գործընկերոջ Վարվելակերպի կանոնակարգին: «Տելեկոմ Արմենիա»-ին կոռուպցիայից եւ այլ զգալի ռիսկերից պաշտպանելու համար մենք մինչեւ բիզնես գործընկերներին ներգրավելն ապահովում ենք պատշաճ համալիր ստուգման անցկացումը: Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ "Բիզնես գործընկերների համալիր ստուգման քաղաքականությունը":

Սոցիալական պատասխանատվություն եւ սոցիալական ներդրումներ

Մենք հասարակության պատասխանատու անդամ ենք եւ խթանում ենք կայուն զարգացումն այն համայնքներում, որոնցում գործում ենք՝ կատարելով սոցիալական ներդրումներ եւ բարեգործական օգնություններ՝ համաձայն մեր

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարությանը: Մենք չենք կատարում որեւիցե տեսակի ֆինանսական կամ ոչ ֆինանսական նվիրատվություն քաղաքական կուսակցություններին, կազմակերպություններին, ֆրակցիաներին կամ այնպիսի հանրային կամ մասնավոր բնույթի շարժումներին, որոնց գործունեությունը հստակ կերպով կապված է քաղաքական կամ կրոնական գործունեության հետ: Ելնելով թափանցիկության սկզբունքներից՝ մենք մեր Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարության, աշխատանքի եւ ծրագրերի մասին տեղեկատվություն ենք հրապարակում մեր տարեկան կայուն զարգացման հաշվետվությունում: «Տելեկոմ Արմենիա»-ն պատրաստակամ է բացառել յուրաքանչյուր տեսակի հարկադիր եւ պարտադիր աշխատանք, ինչպես նաեւ նպաստել մանկական աշխատանքի արդյունավետ վերացմանը:
Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ "«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ սոցիալական նվիրաբերության և բարեգործական նվիրատվության տրամադրման ընթացակարգը", "Հարկադիր աշխատանքի կանխարգելման քաղաքականությունը" և "Երեխաների աշխատանքի կանխարգելման քաղաքականությունը":

Գնումներ

«Տելեկոմ Արմենիա»-ի համար ապրանքներ կամ ծառայություններ գնելիս մենք որոշումները ընդունում ենք հիմնվելով արժանիքների վրա, խուսափում ենք շահերի բախումից, ոչ պատշաճ նվերներից եւ հյուրընկալությունից (հատկապես ընթացող մրցույթի դեպքում) կամ որեւէ այլ տեսակի յուրահատուկ վերաբերմունքիցից, եւ այս հարցում հետեւում ենք մեր գնումների ծառայության հրահանգներին: Մենք բիզնես ենք վարում միայն այն մատակարարների եւ վաճառողների հետ, որոնք համապատասխանում են իրավաբանական պահանջներին եւ գործում են համաձայն «Տելեկոմ Արմենիա»-ի Բիզնես գործընկերոջ Վարվելակերպի կանոնակարգին:
Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ "Գնումների կազմակերպման ընթացակարգ" և "Բիզնես գործընկերոջ վարվելակերպի կանոնակարգ":

Շահերի բախումից խուսափում

Դուք պետք է խուսափեք այնպիսի իրավիճակներից, որոնցում Ձեր անձնական (այդ թվում ընտանիքի անդամների) շահերը եւ հարաբերությունները բախվում են, կամ ենթադրաբար բախվում են Ձեր աշխատանքային պարտականությունների կամ «Տելեկոմ Արմենիա»-ի շահերին:

Դուք չպետք է օգտագործեք «Տելեկոմ Արմենիա»-ում Ձեր պաշտոնը՝ Ձեր կամ Ձեր ընկերոջ կամ բարեկամի անձնական շահերը «Տելեկոմ Արմենիա»-ի շահերի հաշվին առաջ մղելու նպատակով: Ըստ ընթացակարգի, Դուք պետք է տեղեկացնեք ընկերությանը, եթե մտերիմ հարաբերություններ ունեք որեւէ մատակարարի, դիլերի կամ բիզնես գործընկերոջ, կամ
«Տելեկոմ Արմենիա»-ի հետ կապ ունեցող որեւէ պետական պաշտոնատար անձի հետ: Դուք չպետք է թույլ տաք, որպեսզի Ձեր անձնական շահերը կամ հարաբերությունները անարդար կամ ոչ պատշաճ կերպով ազդեն պետական պաշտոնատար անձանց, մատակարարների, դիլերների կամ բիզնես գործընկերների ներգրավման վերաբերյալ որոշումների, ընտրության կամ «Տելեկոմ Արմենիա»-ի՝ նրանց հետ աշխատանքի վրա:
Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ "Շահերի բախման քաղաքականություն":

Պատժամիջոցների եւ Ներմուծման / Արտահանման օրենքների կատարում

Մեր հաճախորդների համար նորարարություններ առաջարկելիս կամ նրանց սպասարկելիս՝ «Տելեկոմ Արմենիա»-ն հետեւում է բոլոր գործող պատժամիջոցների, արտահանման, ներմուծման եւ առեւտրային վերահսկողության մասին օրենքների
պահանջներին: Մատակարարներ ներգրավելիս, առեւտրային հարաբերություններ սկսելիս կամ ապրանքներ, տեխնոլոգիաներ կամ ծառայություններ միջազգային սահմաններով տեղափոխելիս (լինեն ֆիզիկական թե թվային տեղափոխումներ)՝ Դուք պետք է ստուգեք տվյալ դեպքում կիրառվող պատժամիջոցների կամ առեւտրային կանոնների առկայությունը եւ ենթարկվեք դրանց:
Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ "Պատժամիջոցների և արտահանման վերահսկման քաղաքականություն"

Հարց եւ պատասխան. Այլ անձանց հետ հարաբերություններ

Հ. Ես լավ հարաբերություններ եմ հաստատել մեր մրցակից ընկերություններից մեկի ֆինանսական պատասխանատուների հետ: Նրանց հասանելի են իրենց ֆինանսական արդյունքները, գնագոյացումը, միտումները եւ բաժանորդների հետ գործարքները: Արդյո՞ք պատշաճ կլինի այսպիսի տեղեկատվության փոխանակումը նրանց հետ ժամանակ առ ժամանակ:
Պ. Ոչ: Մրցակցային տեղեկատվության փոխանակումն արգելված է եւ կարող է

հանգեցնել իրավական խախտման: Դուք պետք է հրաժարվեք մրցակիցների հետ ֆինանսական արդյունքները, գնագոյացումը, միտումները եւ հաճախորդների հետ գործարքները քննարկելուց:

Հ. Իմ ամուսինը բարձր պաշտոն է զբաղեցնում մի ընկերությունում, որը բիզնես գործարքներ ունի «Տելեկոմ Արմենիա»-ի հետ: «Տելեկոմ Արմենիա»-ում իմ աշխատանքի շրջանակներում ես նույնպես ժամանակ առ ժամանակ առնչվում եմ այդ ընկերության հետ: Արդյո՞ք սա խնդրահարույց է:
Պ. Կարեւոր է, որպեսզի յուրաքանչյուր փաստացի կամ հնարավոր շահերի բախում հրապարակվի ցանկացած խնդիրները կանխատեսելու եւ կանխարգելելու նպատակով: Ձեր իրավիճակը պոտենցիալ շահերի բախման օրինակ է եւ դրա մասին անհրաժեշտ է տեղեկացնել Շահերի բախման մասին քաղաքականության պահանջների համաձայն:

Հ. Կոնտենտ պրովայդերներից մեկը, որի հետ «Տելեկոմ Արմենիա»-ն բիզնես է վարում, ինձ որոշ խորհրդատվական աշխատանք է առաջարկել վեբ կոնտենտի դիզայնի համար:
«Տելեկոմ Արմենիա»-ում ես պատասխանատու եմ կոնտենտ պրովայդերների հետ աշխատանքի համար եւ տեղյակ եմ վեբ կոնտենտի համար ներկայացվող պահանջներից, ինչպես նաեւ կարող եմ կատարել այս աշխատանքը ցանկացած այլ մեկից ավելի լավ: Ես պլանավորում եմ կատարել այն շաբաթ եւ կիրակի օրերին եւ երեկոյան՝ իմ անձնական համակարգչով: Կարող եմ արդյո՞ք ընդունել աշխատանքի առաջարկը:
Պ. Ոչ, քանի որ Դուք պատասխանատու եք այդ բիզնես գործընկերոջ հետ աշխատանքի համար՝ «Տելեկոմ Արմենիա»-ում Ձեր աշխատանքի շրջանակներում: Սա շահերի բախման հստակ իրավիճակ է:

Հ. Մեր բիզնես գործընկերներից մեկի ղեկավարները, որի հետ մենք բանակցում ենք, ցանկանում են այցելել մեր գրասենյակներ: Նրանք ակնկալում են, որ մենք կվճարենք նրանց համար առաջին կարգի ավիատոմսերի ձեռքբերման գինը եւ հյուրանոցի ամրագրման գումարը, եւ կտրամադրենք կանխիկով օրապահիկ ճաշի եւ զվարճանքների համար: Ի լրումն, նրանք խնդրել են իրենց հետ բերել իրենց զույգերին, որպեսզի մենք զբաղեցնենք վերջիններիս երեկոյան: Արդյո՞ք սա թույլատրելի է:
Պ. Մեր բիզնես գործընկերների այցին աջակցելը հնարավոր է թույլատրելի լինի: Հնարավոր է թույլատրել նաեւ երեկոյան զվարճանքի կազմակերպումը: Այնուամենայնիվ, կազմակերպումը պետք է ողջամիտ լինի, որի մեջ չի մտնում

առաջին կարգի տոմսերով ուղեւորությունը, լինի անհրաժեշտ, որի դեպքում այդպիսին չի համարվում ամուսինների ճամփորդությունը, եւ լինի պատշաճ (կանխիկով օրապահիկներն այդպիսիք չեն): Ի լրումն, հաստատումը պետք է ստանալ նախապես՝ համաձայն Կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքարի մասին քաղաքկանության:

3. Երբ հարցը վերաբերում է պետության եւ պետական պաշտոնյաների հետ հարաբերություններին

«Տելեկոմ Արմենիա»-ն պարտավորվում է բաց եւ ազնիվ աշխատել կառավարությունների եւ պետական պաշտոնյաների հետ եւ խուսափել ցանկացած տեսակի կոռուպցիայից:
«Տելեկոմ Արմենիա»-ն արգելում է ֆորմալ գործողությունների արագացման համար վճարումները (այսինքն՝ անօրինական վճարումներ, որոնք արագացնում են պետական գործողությունները): Մենք պետական պաշտոնյաների ճանապարհորդության, հյուրընկալության կամ ժամանցի ծախսերի, օրինակ՝ ավիատոմսերի արժեքի, սննդի (բացի թեթեւ ուտեստներից) կամ հյուրանոցային հաշիվների, անվանական արժեքից ավելի մեծ նվերների կամ նրանց անունից կամ նրանց համար բարեգործական օգնությունների դիմացվճարում կամ փոխհատուցում կատարելու խիստ սահմանափակումներ ենք կիրառում:
Լրացուցիչ տեղեկատվության համար տես՝ "Կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքարի մասին քաղաքականությունը" և "«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ սոցիալական նվիրաբերության և բարեգործական նվիրատվության տրամադրման ընթացակարգը":

Պետական պաշտոնյաներ
Նախքան որեւէ պետական պաշտոնյայի, պետական պաշտոնյայի ընտանիքի անդամի, կամ որեւէ կառավարությանը, պետական պաշտոնյային կամ պետական պաշտոնյայի ընտանիքի անդամին մասնակիորեն կամ ամբողջությամբ պատկանող որեւէ ընկերության հետ բիզնես գործարք կնքելը դիմեք իրավաբանական ու Կոմպլայենսի և ռսիկերի կառավարման հարցերով պատասխանատուներին՝ նախնական քննարկման եւ հաստատման համար:

Պետության կողմից իրականացվող հետաքննություններ

«Տելեկոմ Արմենիա»-ն համագործակցում է ՀՀ պետության կողմից իրականացվող հետաքննություններում, տրամադրում է ճշմարիտ եւ ճշգրիտ տեղեկատվություն եւ չի հրաժարվում, թաքցնում, խեղաթյուրում կամ ուշացնում պետական մարմինների կողմից օրինական հիմքերով պահանջվող տեղեկատվության տրամադրումը: Եթե որեւէ պետական պաշտոնյա կամ պետական մարմին պահանջում է տրամադրել պետական կամ կարգավորող մարմինների պահանջի կամ հետաքննության հետ կապված տեղեկատվություն, ստանում եք պետական կամ կարգավորող մարմինների կողմից տեղեկատվության ոչ ստանդարտ հարցում, կամ Ձեզ հայտնի են դառնում ցանկացած փաստեր, որոնք կարող են հանգեցնել «Տելեկոմ Արմենիա»-ի նկատմամբ իրավական պահանջների, Դուք պետք է անհապաղ դիմեք Ձեր անմիջական ղեկավարին, իրավաբանական կամ Կոմպլայենսի և ռիսկերի կառավարման հարցերով պատասխանատուներին:

Քաղաքական գործունեություն

«Տելեկոմ Արմենիա»-ն ընդունում է քաղաքական գործընթացներին մասնակցելու Ձեր իրավունքը՝ ըստ երկրում ընդունված կարգի: Ընդ որում Դուք պետք է հստակ կերպով նշեք, որ Ձեր հայացքները եւ գործողությունները Ձեր սեփականն են, այլ ոչ «Տելեկոմ Արմենիա»-ինը: Դուք չեք կարող օգտագործել «Տելեկոմ Արմենիա»-ի ժամանակը, գույքը, լոգոները, պատկերները կամ սարքավորումը՝ անձնական քաղաքական գործունեության իրականացման կամ աջակցման համար: Դուք չեք կարող մյուսներից պահանջել աջակցել որեւէ քաղաքական կուսակցության կամ թեկնածուի աշխատանքային օրվա ընթացքում:

«Տելեկոմ Արմենիա»-ն չի իրականացնում որեւէ քաղաքական ներդրումներ եւ չի փոխհատուցում որեւէ քաղաքական ներդրումներ կամ ծախսեր:

Եթե Դուք պլանավորում եք հավակնել կամ ստանձնել որեւէ պետական պաշտոն, ապա այդ մասին պետք է նախապես տեղեկացնեք Ձեր անմիջական ղեկավարին, Կոմպլայենսի և ռիսկերի կառավարման հարցերով պատասխանատուին եւ քննարկեք, թե արդյոք Ձեր քաղաքական պարտականությունները կարող են ազդել կամ բացասական անդրադառնալ Ձեր աշխատանքի վրա:

Հարց եւ պատասխան. Պետության եւ պետական պաշտոնյաների հետ հարաբերությունները

Հ. Իմ կողմից ղեկավարվող ստորաբաժանման աշխատակիցներից մեկն աջակցում է ընդիմադիր քաղաքական ուժերից մեկին: Նա վերջերս հեռուստատեսությամբ մասնակցել է քաղաքական բանավեճի: Թեեւ բանավեճի ընթացքում նա երբեք չի նշել «Տելեկոմ Արմենիա»-ի մասին կամ երբեք չի ասել, որ խոսում է «Տելեկոմ Արմենիա»-ի անունից, սակայն, հաջորդ օրը նրա ընդիմախոսները սոցիալական ցանցերում հրապարակել էին մի հոդված, որում ասվում էր, որ «Տելեկոմ Արմենիա»-ի աշխատակիցն աջակցում է ընդիմադիր ուժերին: Որպես ղեկավար ես մտավախություն ունեմ, որ նրա քաղաքական գործունեությունը կարող է հարուցել իշխանությունների դժգոհությունը եւ դժվարություններ առաջացնել բիզնեսի հարցում: Պե՞տք է արդյոք ես՝ որպես ղեկավար, այդ աշխատակցի նկատմամբ ձեռնարկեմ կարգապահական ներգործության միջոցներ:

Պ. Ոչ: Եթե աշխատակիցը չի նշել, որ ինքը հայտնում է «Տելեկոմ Արմենիա»-ի տեսակետը եւ չի օգտագործել «Տելեկոմ Արմենիա»-ի ռեսուրսներն իր քաղաքական գործունեության համար, ապա նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավական հիմքեր չկան: Մեր աշխատակիցներն ազատ են արտահայտելու իրենց սեփական տեսակետը եւ մասնակցելու իրավաչափ քաղաքական գործունեության: Դուք, այնուամենայնիվ, պետք է անմիջապես այդ իրավիճակի մասին տեղեկացնեք հասարակայնության հետ կապերի ծառայությանը, որպեսզի նրանք կարողանան արձագանքել ըստ անհրաժեշտության (օրինակ՝ պահանջելով հոդվածի հեղինակից հերքում տպագրել):

Հ. Մենք նախատեսում ենք Ամանորյա նվերներ հանձնել որոշ պետական պաշտոնյաների, ինչպես օրինակ մեկ շիշ գինի: Մենք նրանց չենք խնդրում որեւէ ապօրինի բան անել
«Տելեկոմ Արմենիա»-ի համար կամ մեզ որեւէ նախապատվություն տրամադրել: Մենք ոչ մի պարագայում մտադրություն չունենք ներազդել պաշտոնական գործունեության վրա: Կարող ենք արդյո՞ք տալ այդ նվերները:

Պ. Դուք պետք է նախապես ստանաք Կոմպլայենսի և ռիսկերի կառավարման ստորաբաժանման ղեկավարի համաձայնությունը այնպիսի նվերի համար, որի արժեքը գերազանցում է նախատեսված սահմանաչափը՝ Կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքարի մասին քաղաքականության համաձայն: Խելամիտ կշռադատեք որոշելու համար, թե արդյոք այդ նվերը պատշաճ է եւ հաշվի առեք հետեւյալը. «արդյոք այս նվերի արժեքը կամ տեսակը չի առաջացնի «Տելեկոմ Արմենիա»-ի, իմ եւ ստացող կողմի համար անհարմար իրավիճակ»: Մեկ շիշ գինին կարող է նաեւ բավականաչափ թանկարժեք լինել՝ դրանով իսկ կասկածներ առաջացնելով, ինչպես նաեւ կարող է լինել որոշ մշակույթների համար ոչ պատշաճ:

4. Երբ հարցը վերաբերում է հաղորդակցությանը, տեղեկատվության փոխանակմանը եւ գաղտնիությանը

Այն, թե ինչպես ենք մենք ներկայացնում «Տելեկոմ Արմենիա»-ն հանրությանը, կարեւոր է եւ հաճախ ենթադրում է բազմակողմանի մոտեցում:
Միայն նշանակված անձինք կարող են «Տելեկոմ Արմենիա»-ի մասին քննարկումներ վարել լրատվամիջոցների, ֆինանսական վերլուծաբանների եւ ներդրողների հետ:
Դուք պետք է զգուշությամբ օգտվեք սոցիալական լրատվամիջոցներից՝ հատկապես աշխատանքի կամ աշխատանքի հետ կապված հարցերի մասին խոսելիս: Դուք պետք է պաշտպանեք գաղտնիությունը եւ չքննարկեք «Տելեկոմ Արմենիա»-ի որեւէ բիզնես գործընկերոջը, կոլեգաներին կամ այլ շահագրգիռ կողմերին՝ առանց վերջիններիս թույլտվության, կամ չպետք է բացահայտեք որեւէ գաղտնի կամ ծառայողական տեղեկատվություն:
Արտաքին հարցումներին արձագանքման կամ սոցիալական լրատվամիջոցների օգտագործման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես՝ "Արտաքին հաղորդակցության քաղաքականությանը":

«Տելեկոմ Արմենիա»-ի տեղեկատվության ճշգրտության ապահովում
Այն ամբողջ տեղեկատվությունը, որը Դուք հայտնում եք «Տելեկոմ Արմենիա»-ի անունից, պետք է ճշգրիտ եւ ամբողջական լինի: Բոլոր գրառումները, այդ թվում՝ հաշիվները եւ ֆինանսական հաշվետվությունները, պետք է իրականացվեն ժամանակին, վարվեն պատշաճ մանրամասներով եւ ճշգրտորեն արտացոլեն գործարքները:

Դուք պետք է կատարեք տեղեկատվության տրամադրմանը վերաբերող բոլոր իրավական պահանջները եւ «Տելեկոմ Արմենիա»-ի ներքին ընթացակարգերը:
Դուք պետք է ապահովեք, որպեսզի չհաստատվեն կամ չվարվեն որեւէ չբացահայտված կամ չգրանցված համաձայնագրեր, հաշիվներ, միջոցներ կամ ակտիվներ: Դուք պետք է հետեւեք, որ «Տելեկոմ Արմենիա»-ի անունից բոլոր պարտավորությունները եւ կոմերցիոն համաձայնությունները գրավոր ձեւակերպում ստանան եւ ներառեն կողմերի միջեւ պայմանավորվածության եւ

համաձայնության էական պայմաններն ամբողջությամբ:

Դուք պետք է լիարժեք կերպով համագործակցեք ներքին եւ արտաքին աուդիտորների հետ եւ նրանց տրամադրեք ճշգրիտ տեղեկատվություն: Ղեկավարությունից կամ ներքին կամ արտաքին աուդիտորներից տեղեկատվության թաքցնելը կարող է լուրջ վնաս պատճառել «Տելեկոմ Արմենիա»-ի ֆինանսական անթերիությանը եւ դա խստիվ արգելվում է: Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

«Տելեկոմ Արմենիա»-ի տեղեկատվության փոխանցումը

«Տելեկոմ Արմենիա»-ից դուրս գաղտնի տեղեկատվություն փոխանցելուց առաջ Դուք պետք է խորհրդակցեք իրավաբանական ստորաբաժանման ներկայացուցչի հետ եւ հետեւեք վերջինիս հրահանգներին: Ժամանակ առ ժամանակ մեզ հարկավոր է գաղտնի տեղեկատվություն փոխանցել այլ անձանց «Տելեկոմ Արմենիա»-ից դուրս, որպեսզի որեւէ բիզնես գործընկեր (օրինակ՝ ծառայություն մատուցող կամ արտաքին աուդիտոր) կարողանա մեզ հետ արդյունավետ աշխատել: Մենք կիրառում ենք գաղտնի տեղեկատվության չբացահայտման համաձայնագրեր՝ մեր կողմից փոխանցվող տեղեկատվությունը պաշտպանելու նպատակով:

Գաղտնիություն և անձնական տեղեկատվություն

Մենք ապահովում ենք մեր հաճախորդների անհատական տվյալների եւ հաղորդակցության գաղտնիությունը: Մեր հաճախորդները եւ այլ երրորդ կողմեր վստահում են մեզ իրենց անձնական տեղեկատվությունը, եւ մենք գնահատում ենք այդ վստահությունը: Մենք հետեւում ենք տեղեկատվական անվտանգության կարգավորմանն ուղղված գործող նորմերին եւ գաղտնի տեղեկատվությունը կորուստից, գողությունից կամ պատահական բացահայտումից ապահով ենք պահում: Դուք չեք կարող մուտք գործել, դիտարկել, օգտագործել, փոփոխել, փոխանցել կամ տարածել հաճախորդին վերաբերող տեղեկատվությունը՝ առանց հիմնավոր բիզնես պատճառի եւ առանց պատշաճ թույլտվության: «Տելեկոմ Արմենիա»-ն պարտավորվում է հարգել Ձեր անձնական տվյալների գաղտնիությունը: Մենք ձեռք ենք բերում եւ պահում ենք միայն այն անհատական տվյալները, որոնք պահանջվում են «Տելեկոմ Արմենիա»-ի արդյունավետ գործունեության համար կամ օրենքով: Անձնական գրառումների հասանելիությունը սահմանափակված է լիազորված անձանցով, ովքեր այդ

տեղեկատվության համար ունեն հստակ աշխատանքային անհրաժեշտություն: Ձեր անձնական տվյալները չեն տրամադրվի որեւէ մեկի «Տելեկոմ Արմենիա»-ից դուրս՝ առանց վավեր իրավական հիմքի եւ կտրամադրվի միայն այնպես, որ ապահովվի վերջինիս պատշաճ պաշտպանությունը:
Լրացուցիչ տեղեկատվության համար տես՝ Անձնական տվյալների պաշտպանության քաղաքականությունը (Գաղտնիության քաղաքականություն):

Հարց և պատասխան. Հաղորդակցություն, տեղեկատվության փոխանակում և գաղտնիություն

Հ. Ինձ հետ նույն ստորաբաժանումում աշխատող ընկերս հարցրել է ինձ, թե արդյոք կարող եմ իրեն տրամադրել իր կնոջ բջջային հեռախոսահամարի տրաֆիկի մասին
տեղեկատվությունը: Նա գտնում է, որ իր կնոջ հեռախոսահամարի հաշիվները չափազանց բարձր են: Իմ ընկերոջը հասանելի չեն բաժանորդային բազայի տվյալները, եւ նա չի կարող ինքնուրույն ստանալ այս տեղեկատվությունը: Պե՞տք է արդյոք ես օգնեմ նրան:
Պ. Ոչ: Մենք կարող ենք տեղեկություն տրամադրել միայն անձամբ հաճախորդին կամ վերջինիս կողմից լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչին: Մենք չպետք է այս տեղեկատվությունը բացահայտենք որեւէ մեկի, այդ թվում նաեւ մեր ընկերներին եւ գործընկերներին:

Հ. Մինչեւ «Տելեկոմ Արմենիա»-ում աշխատելիս ես աշխատում էի մրցակցի մոտ: Ես ինձ հետ բերել եմ որոշակի ներքին տեղեկատվություն իմ նախկին գործատուի մասին: Պե՞տք է արդյոք դրանով կիսվեմ իմ մենեջերի հետ:
Պ. Ոչ, դա ապօրինի է:

Հ. Ի՞նչն է համարվում էական նշանակության ոչ-հանրային տեղեկատվություն:
Պ. Էական նշանակության ոչ-հանրային տեղեկատվությունը կարող է ներառել՝ ցանկացած ֆինանսական արդյունքների մասին տեղեկատվություն, այդ թվում նաեւ այդ ֆինանսական արդյունքներում եւ/կամ ֆինանսական պայմաններում, ֆինանսական կանխատեսումներում էական փոփոխությունները; խոշոր նոր պայմանագրերը, լիազորագրերը, բաժանորդներին, ծառայությունները, մատակարարներին կամ
ֆինանսական աղբյուրները կամ նրանց կորուստը; նշանակալից ակտիվների

ձեռքբերումը կամ օտարումը, կարգավորող մարմինների կողմից մեր գործունեությանը վերաբերող էական գործողությունները:

5. Երբ հարցը վերաբերում է «Տելեկոմ Արմենիա»-ի ակտիվների պաշտպանությանը

Մենք պարտավորություն ենք կրում «Տելեկոմ Արմենիա»-ի եւ վերջինիս բաժնետերերի նկատմամբ՝ պաշտպանել եւ նպատակային օգտագործել «Տելեկոմ Արմենիա»-ի ակտիվները, ռեսուրսները եւ գույքը, այդ թվում՝ «Տելեկոմ Արմենիա»-ի մտավոր սեփականությունը:

«Տելեկոմ Արմենիա»-ի ակտիվների վատնումից կամ չարաշահումից խուսափում
Մենք պարտավոր ենք ողջամիտ լինել եւ ապահովել, որպեսզի «Տելեկոմ Արմենիա»-ի ակտիվները չչարաշահվեն կամ չվատնվեն: «Տելեկոմ Արմենիա»-ի ակտիվները ներառում են գույքը եւ սարքավորումները, ժամանակը, գաղտնի տեղեկությունները եւ «Տելեկոմ Արմենիա»-ի միջոցները: «Տելեկոմ Արմենիա»-ի սարքավորումների (օրինակ՝ բջջային հեռախոսներ, պատճենահանող մեքենաներ, համակարգիչներ եւ այլն) որոշակի ոչ առաջնային եւ անձնական նպատակով օգտագործումը սովորաբար թույլատրվում է, եթե իրականացվում է երբեմն, չի առաջացնում «Տելեկոմ Արմենիա»-ի համար էական ծախսեր, չի խոչընդոտում աշխատանքային պարտականությունների կատարմանը եւ կապված չէ անօրինական կամ ոչ պատշաճ գործունեության հետ:
Դուք պետք է իմանաք ձեզ վերաբերող գործողումների հետ կապված քաղաքականությունը եւ կանոնակարգը եւ հետեւեք դրանց պահանջներին: Դուք պատասխանատու եք բոլոր անհրաժեշտ հաստատումների ձեռքբերման համար: «Տելեկոմ Արմենիա»-ն կփոխհատուցի միայն օրինական բիզնես ծախսերը: Հյուրանոցում սենյակ կամ տոմս կամ սնունդ ամրագրելիս՝ Դուք միշտ պետք է ձգտեք ընտրել ամենացածր գներն ու ողջամիտ տարբերակները:

«Տելեկոմ Արմենիա»-ի ակտիվների պաշտպանություն խարդախությունից կամ թալանից

Միշտ ազնվորեն գործեք: Մենք պետք է պաշտպանենք «Տելեկոմ Արմենիա»-ի միջոցները եւ այլ ակտիվներն այնպես, ինչպես կպաշտպանեինք մեր սեփականը՝ պաշտպանելով չարաշահումից, կորստից, խարդախությունից կամ թալանից: Սա ներառում է Ձեզ տրամադրված «Տելեկոմ Արմենիա»-ի դրամական միջոցները կամ վճարման քարտերը: Մենք պետք է ապահովենք, որպեսզի բոլոր ծախսերը, փոխհատուցման պահանջները, վաուչերները, հաշիվները ճշգրիտ լինեն, համապատասխանեն «Տելեկոմ Արմենիա»-ի համապատասխան քաղաքականություններին, ընթացակարգերին եւ կանոններին եւ տրամադրվեն ժամանակին: Մենք չենք վաճառում, փոխանցում կամ տնօրինում «Տելեկոմ Արմենիա»-ի ակտիվները՝ առանց պատշաճ թղթաբանության եւ լիազորության:

Մտավոր սեփականության պաշտպանություն

«Տելեկոմ Արմենիա»-ի կողմից նորարարություններ ներմուծելիս մենք պարբերաբար ստեղծում ենք արժեքավոր, հրապարակման ոչ ենթակա գաղափարներ (մտավոր սեփականություն): Մեր մտավոր սեփականությունը մեր ամենաարժեքավոր ակտիվն է, եւ մենք պետք է պաշտպանենք այն այնպես, ինչպես պաշտպանում ենք այլ տեսակի գույքը կամ
ակտիվները: Սա ներառում է մեր բիզնես գործընկերների կողմից մեր լոգոն եւ բրենդը ոչ պատշաճ օգտագործումից պաշտպանելու նպատակով պատշաճ քայլերի ձեռնարկումը:
«Տելեկոմ Արմենիա»-ի մտավոր սեփականությունը պաշտպանելու Ձեր պարտականությունը գործում է ձեր ամբողջ աշխատանքի ընթացքում եւ շարունակվում էնաեւ Ձեր աշխատանքային հարաբերությունների դադարեցումից հետո: Եթե հարցեր ունեք «Տելեկոմ Արմենիա»-ի մտավոր սեփականության օգտագործման կամ դրա նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ, ապա քննարկեք դրանք իրավաբանական ծառայության հետ:

«Տելեկոմ Արմենիա»-ի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի պաշտպանություն

Համակարգչային համակարգերը եւ դրանցում մշակվող եւ պահպանվող տեղեկատվությունը չափազանց կարեւոր են մեր բիզնեսի համար: Բոլոր այն անձինք, ովքեր
օգտագործում են «Տելեկոմ Արմենիա»-ի համակարգերը, պետք է ապահովեն այս ռեսուրսների պատշաճ, ինչպես նաև գաղտնիության եւ կիբեռ-անվտանգության քաղաքականությունների համաձայն օգտագործումը: «Տելեկոմ Արմենիա»-ի

համակագչային ծրագրերը, ծրագրային ապահովումները եւ ամբողջ տեղեկությունները հանդիսանում են «Տելեկոմ Արմենիա»-ի գույքը: Դուք պետք է «Տելեկոմ Արմենիա»-ի համակարգերը օգտագործեք պատասխանատվությամբ եւ աշխատանքային անհրաժեշտությունից բխող նպատակներով: Դուք չեք կարող մուտք գործել, պահել կամ ուղարկել սեռական բնույթի նյութեր (պատկերներով թե տեքստի տեսքով), բռնություն կամ այլ անձանց նկատմամբ անհանդուրժողականություն քարոզող նյութեր, կամ հետապնդող բնույթի կամ անպարկեշտ նյութեր: Դուք պետք է պաշտպանեք եւ չփոխանցեք այլ անձանց Ձեր մուտքի թույլտվության տվյալները (օրինակ՝ օգտատիրոջ Ձեր ID-ին կամ գաղտնաբառը) կամ թույլ չտաք այլ անձանց օգտագործել «Տելեկոմ Արմենիա»-ի սարքավորումները կամ ռեսուրսները:

Բոլոր գործարքների պատշաճ հաստատման ապահովում

«Տելեկոմ Արմենիա»-ի անունից Ձեր իրավասություններից դուրս պարտավորությունների ստանձնումը «Տելեկոմ Արմենիա»-ի քաղաքականությունների լուրջ խախտում է հանդիսանում եւ կարող է վտանգել «Տելեկոմ Արմենիա»-ի ֆինանսական անթերիությունը:
Որպես նվազագույն պահանջ՝ համաձայնագրերը պետք է կնքվեն գրավոր եւ արտացոլեն կողմերի միջեւ առկա բոլոր պայմանավորվածությունները: Նախքան որեւէ կորպորատիվ կամ գործարքային փաստաթուղթ ստորագրելը Դուք պետք է գործեք Ձեր իրավասության սահմաններում:

Փաստաթղթերի պատշաճ պահպանման ապահովում

Բոլոր փաստաթղթերը եւ այլ գրառումներ, որոնք ստեղծվել կամ ստացվել են Ձեր աշխատանքի հետ կապված, պետք է պահվեն բոլոր գործող օրենքներին եւ նորմերին, ինչպես նաեւ «Տելեկոմ Արմենիա»-ի քաղաքականություններին եւ իրավաբանական ստորաբաժնման հրահանգներին համապատասխան:
Լրացուցիչ տեղեկատվության համար տես՝ Գրառումների պահպանման քաղաքականությունը:

Հարց եւ պատասխան. «Տելեկոմ Արմենիա»-ի ակտիվների պաշտպանությունը

Հ.Ես իմ կորպորատիվ նոութբուքը երբեմն տուն եմ տանում՝ ինտերնետից օգտվելու նպատակով: Իմ դուստրը խնդրել է թույլ տալ օգտվել իմ նոութբուքից իմ արձակուրդ մեկնելու ընթացքում: Կարող եմ արդյոք նրան տրամադրել իմ մուտքանունը եւ գաղտնաբառը?
Պ. Ոչ: Մուտքանունները եւ գաղտնաբառերը օգնում են պահպանել «Տելեկոմ

Արմենիա»-ի տեղեկատվության եւ տեխնոլոգիական ռեսուրսների անվտանգությունը: Դուք չեք կարող տրամադրել Ձեր լոգինը եւ գաղտնաբառը որեւիցե մեկին, անգամ նույնիսկ Ձեր ամենամոտ ընտանիքի անդամներին:

Հ. «Տելեկոմ Արմենիա»-ի նախկին աշխատակիցներից մեկը, որն աշխատում էր իմ թիմում, վերջերս կապվել էր ինձ հետ՝ խնդրելով իրեն տրամադրել որոշ նյութերի պատճեններ, որոնց վրա մենք աշխատել էինք վերջինիս հետ «Տելեկոմ Արմենիա»-ում աշխատելու ժամանակահատվածում: Ես նրան պատասխանել եմ, որ կճշտեմ եւ կպատասխանեմ: Ի՞նչ պետք է այժմ ես անեմ:
Պ. Դուք չեք կարող Ձեր նախկին կոլեգային տրամադրել «Տելեկոմ Արմենիա»-ի գաղտնի տեղեկատվությունը: Անմիջապես տեղեկացրեք Ձեր ղեկավարին: Նա կարող է տեղյակ պահել այդ մասին SS անվտանգության եւ իրավաբանական ստորաբաժանումներին՝ որոշելու
համար, թե ինչպես պաշտպանել «Տելեկոմ Արմենիա»-ի գաղտնի տեղեկատվությունը եւ սեփականությունը:

Հ. Մեր դիլերներից մեկը չի հասել վաճառքի համար սահմանված նպատակային սահմանաչափին չնչին տարբերությամբ, որը նրան թույլ կտար ստանալ նպատակների համար սահմանված բոնուսը: Դիլերների հետ աշխատանքի համար պատասխանատու
«Տելեկոմ Արմենիա»-ի ղեկավարը որոշել է «կլորացնել» այս դիլերի վաճառքի արդյունքները, որպեսզի վերջինս բոնուսից չզրկվի: Ղեկավարն ասում է, որ սա մեր ամենակարեւոր դիլերներից է, եւ մենք պետք է բոնուսը վճարենք նրա հետ լավ հարաբերություններ պահպանելու համար: Արդյո՞ք այդ ղեկավարի գործողություններն ընդունելի են՝ հաշվիառնելով, որ նա անձնական շահ չունի:
Պ. Ոչ: Վաճառքի հետ կապված թվերի դիտավորյալ ուռճացումը հակասում է սույն Կանոնակարգին եւ «Տելեկոմ Արմենիա»-ի այլ քաղաքականությունների եւ ընթացակարգերի պահանջներին: Դուք պետք է անմիջապես տեղյակ պահեք այս մասին Կոմպլայենսի և ռիսկերի կառավարման հարցերով պատասխանատուներին, կամ հաղորդեք այս մասին
Կոմպլայենսի և ռիսկերի կառավարման SpeakUp թեժ գծին (հաղորդման հասանելի միջոցները ներկայացված են սույն Կանոնակարգի 6-րդ ենթաբաժնում):

Հ. Եռամսյակային հաշվետվությունների վերջին ամիսն է: Իմ ղեկավարը ցանկանում է համոզվել, որ մենք հասել ենք մեր եռամսյակային թվերին, ուստի խնդրում է այժմ գրանցել մի չհաստատված վաճառք, որը ավարտին չի հասցվի

մինչեւ մյուս շաբաթ: Կարծես թե, սա որեւէ մեկին չի վնասի: Պե՞տք է արդյոք կատարել նրա ասածը:
Պ. Ոչ: Ծախսերը եւ եկամուտները պետք է գրանցվեն ճիշտ ժամանակահատվածում: Վաճառքը դեռ ավարտված չէ: Դա կարող է ստեղծել թյուրիմացություն եւ կարող է հավասարվել կեղծարարության, եթե ընդգրկվի ավելի վաղ ժամանակահատվածում: Ձեր պարտականությունն է հաղորդել այս դեպքի մասին ֆինանսների վարչությանը, իրավաբանական տնօրինությանը, Կոմպլայենսի և ռիսկերի կառավարման պատասխանատուներին, կամ կոմպլայենսի և ռիսկերի կառավարման SpeakUp թեժ գծին (հաղորդման հասանելի միջոցները ներկայացված են սույն Կանոնակարգի 6-րդ ենթաբաժնում):

6. Երբ հարցը վերաբերում է սույն Կանոնակարգի կիրառմանը

Սույն Կանոնակարգում շատ տեղեկատվություն է տրամադրված, սակայն, այն չի կարող ընդգրկել բոլոր հնարավոր ծագող իրավիճակները: Ձեզ հարկավոր է նաեւ ուսումնասիրել որոշակի տեղական օրենքներ եւ նորմեր, ինչպես նաեւ «Տելեկոմ Արմենիա»-ի այն քաղաքականությունները, որոնց հղում է կատարվում սույն Կանոնակարգում, ինչպես նաեւ օրենսդրությամբ սահմանված իրավական ակտերը եւ ընթացակարգերը: Սույն Կանոնակարգի եւ օրենսդրական նորմերի կամ «Տելեկոմ Արմենիա»-ի այլ քաղաքականությունների միջեւ տարբերությունների առկայության դեպքում անհրաժեշտ է կիրառել այն կանոնները, որոնք վարվելակերպի առումով սահմանում են ավելի բարձր եւ խիստ ստանդարտներ: Ձեր պատասխանատվությունն է իմանալ այն օրենքները եւ կանոնները, որոնք ձեզ են վերաբերում, որտեղ կասկածի դեպքում անհրաժեշտ է դիմել խորհրդատվության: Եթե առնչվում եք անհասկանալի թվացող որեւէ իրավիճակի, ապա խորհրդակցեք Ձեր անմիջական ղեկավարի, Կոմպլայենսի և ռիսկերի կառավարման կամ իրավաբանական պատասխանատուների հետ:

Ինչպե՞ս որոշել, թե ինչպես է պետք վարվել:
Դուք կարող եք առնչվել այնպիսի իրավիճակների, երբ «Տելեկոմ Արմենիա»-ն չունի որեւէ համապատասխան քաղաքականություն կամ ընթացակարգ, կամ երբ գուցե վստահ չլինեք, որ որեւէ քաղաքականություն կիրառելի է ձեզ հանդիպած

փաստերի կապակցությամբ: Այդպիսի դեպքերում ճիշտ ընտրություն կատարելու կամ ճիշտ գործելու համար հարցրեք ինքներդ ձեզ հետեւյալը՝

- Արդյո՞ք սա խախտում է օրենքը կամ պրոֆեսիոնալ էթիկան;
- Սա համապատասխանու՞մ է սույն Կանոնակարգում գրվածին եւ դրա ոգուն;
- Արդյո՞ք սա կարող է վնաս հասցնել "Տելեկոմ Արմենիա"-ին կամ վերջինիս հեղինակությանը;
- Արդյո՞ք սա կարող է ֆիզիկական, բարոյական կամ այլ վնաս հասցնել որեւէ անձի;
- Արդյո՞ք անհարմար կզգամ, եթե ընկերներս կամ ընտանիքիս անդամները իմանան, որ ես դա արել եմ;
- Արդյո՞ք անհարմար կզգամ, եթե այս մասին տեղեկատվություն հրապարակվի որեւէ լրատվամիջոցում կամ նորություններում:

Եթե կարող եք այս բոլոր հարցերին պատասխանել «ոչ», ապա հավանաբար անվտանգ իրավիճակում եք: Եթե այս հարցերից որեւէ մեկին պատասխանեք «այո» կամ «վստահ չեմ», խորհրդակցեք Ձեր անմիջական ղեկավարի, Կոմպլայենսի և ռիսկերի կառավարման կամ իրավաբանական պատասխանատուների հետ: Սթափ եւ ողջամիտ դատեք, որպեսզի Ձեր քայլերը չխախտեն օրենքը, չվնասեն «Տելեկոմ Արմենիա»-ի հեղինակությանը, կամ ռիսկի առջեւ չկանգնեցնեն Ձեզ կամ «Տելեկոմ Արմենիա»-ին:

Եթե ղեկավարում եք այլ անձանց, ապա առավել բարձր պատասխանատվություն եք կրում: Դուք պետք է Ձեր օրինակով խթանեք կոմպլայենսը եւ էթիկայի նորմերը՝

- Համոզվեք, որ Ձեզ ենթակա անձինք հասկանում են սույն Կանոնակարգի պահանջները եւ կատարում են դրանք;
- Հավատարիմ եղեք բոլոր բիզնես գործարքներում կաշառակերության եւ կոռուպցիայի նկատմամբ «Տելեկոմ Արմենիա»-ի անհանդուրժողականությանը;
- Այնպիսի միջավայր ստեղծեք, որտեղ մարդիկ ազատ արտահայտում են իրենց
- մտահոգությունները;
- Հետեւողական եղեք Կանոնակարգի կատարման հարցում եւ աջակցեք նրանց, ովքեր բարեխղճորեն հարցեր են բարձրացնում կամ մտահոգություն են

արտահայտում, ապահովե՛ք գաղտնիությունը եւ բացառե՛ք հետապնդումը: Աշխատանքի արդյունավետությունը գնահատելիս՝ համեմատեք վարքը սույն Կանոնակարգում նկարագրվածի հետ;

- Երբեք մի խրախուսեք կամ թույլ մի տվեք որեւէ մեկին բիզնես արդյունքների հասնել էթիկական վարվելակերպի կամ սույն Կանոնակարգի կամ գործող օրենքի հաշվին:

Որտե՞ղ կարող եք հայտնել որեւէ խնդրի մասին

Դուք կարող եք Ձեր մտահոգությունն արտահայտել կամ հաղորդել՝

- խոսելով անմիջապես Ձեր անմիջական ղեկավարի կամ Կոմպլայենսի և ռիսկերի կառավարման բաժնի հետ;
- Էլեկտրոնային գրություն ուղարկել compliance@telecomarmenia.am փոստին:
- հաղորդում թողնելով մտահոգությունների հաղորդման առցանց կառավարման համակարգում, որը հասանելի է հետևյալ հղմամբ https://speakup.telecomarmenia.am

«Տելեկոմ Արմենիա»-ն լուրջ է վերաբերվում սույն Կանոնակարգի պոտենցիալ խախտումներին եւ պարտավորվում է պահպանել գաղտնիությունը եւ անհապաղ ու պրոֆեսիոնալ կերպով դիտարկել ոչ պատշաճ վարվելակերպի վերաբերյալ հայտարարությունները: Դուք պետք է համագործակցեք ներքին հետաքննություններ վարելիս:
Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ "Մտահոգությունների Բարձրաձայնման և Հետապնդում Չիրականացնելու Քաղաքականությունը":

Արդյոք կարող եք անանուն կերպով զեկուցել որեւէ խնդրի մասին

Ձեր ինքնությունն իմանալը կօգնի «Տելեկոմ Արմենիա»-ին Ձեր մտահոգությունների կապակցությամբ վարել հնարավորինս մանրակրկիտ հետաքննություն, հետեւաբար մենք խրախուսում ենք հայտնել մեզ Ձեր ինքնությունը՝ հայտնի կամ ենթադրվող խախտմանմասին տեղեկացնելիս: Եթե չեք ցանկանում հայտնել Ձեր ինքնությունը, հիմնականում բոլոր օրենսդրական իրավասությունների շրջանակում Դուք կարող եք անանուն կերպով հաղորդում տալ: Անկախ նրանից, թե ինչպես եք ընտրում

հաղորդում ներկայացնել՝ «Տելեկոմ Արմենիա»-ն կդիտարկի Ձեր մտահոգությունը եւ պատշաճ գործողություններ կձեռնարկի:

Ինչպիսի՞ն են Կանոնակարգի խախտումների հետեւանքները

Կանոնակարգի խախտումը լուրջ խնդիր է: Կանոնակարգի խախտումների հետեւանքները կարող են ներառել՝

- կարգապահական ներգործության միջոցների կիրառում՝ ընդհուպ մինչեւ աշխատավարձի բարձրացման, կարճաժամկետ կամ երկարաժամկետ պարգեւատրումների, առաջխաղացման հնարավորության կորուստը կամ կրճատումը;
- պաշտոնից ժամանակավոր հեռացում՝ առանց վարձատրության;
- աշխատանքային հարաբերությունների դադարեցում:
- Համապատասխան հիմնավորման դեպքում «Տելեկոմ Արմենիա»-ն կարող է նախաձեռնել դատական վարույթ եւ/կամ տեղեկացնել համապատասխան իրավապահ մարմիններին:

Արդյո՞ք հետապնդումներից պաշտպանված եք

Ցանկացած անձ, ով բարեխղճորեն դիմում է խորհրդատվություն ստանալու նպատակով, մտահոգություն է արտահայտում կամ զեկուցում է ոչ պատշաճ վարվելակերպի մասին, գործում է սույն Կանոնակարգի պահանջների համաձայն եւ ճիշտ է վարվում: «Տելեկոմ Արմենիա»-ն չի հանդուրժի որեւէ հետապնդում կամ հակընդդեմ գործողություններ որեւէ անձի նկատմամբ, ով բարեխղճորեն հայտնում է իր մտահոգությունը:

Որտե՞ղ հղել հարցերը

Սույն Կանոնակարգի վերաբերյալ ընդհանուր բնույթի հարցերը կարող եք քննարկել Ձեր անմիջական ղեկավարի, էթիկայի եւ կոմպլայենսի հարցերով պատասխանատուի, իրավաբանական տնօրինության, մարդկային ռեսուրսների կառավարման եւ կազմակերպության զարգացման ստորաբաժանման հետ կամ կարող եք դիմել հետեւյալ հասցեով՝ compliance@telecomarmenia.am:

Հարց եւ պատասխան. Տեղեկացման ուղիներն ու միջոցները

Հ. Ես մտածում եմ էթիկայի եւ կոմպլայենսի պատասխանատուի հետ կապվելու մասին, սակայն վստահ չեմ, թե ինչ պետք է անեմ: Իմ անմիջական ղեկավարը խնդրել է ինձ մի բան անել, որը զգում եմ, որ ճիշտ չէ եւ կարող է նույնիսկ ոչ օրինական լինել: Ես գտնում եմ, որ ինչ-որ մեկին պետք է հայտնեմ այդ մասին, սակայն մտավախություն ունեմ, որ անմիջական ղեկավարս կբարդացնի աշխատանքս, եթե այդպես վարվեմ: Ինչպե՞ս վարվել:

Պ. Նույնիսկ ամենալավ ընկերություններում լինում են մարդիկ, ովքեր կատարում են այնպիսի արարքներ, որոնք չպետք է կատարեին: Դուք բացահայտել եք մի բան, որն ըստ Ձեզ պոտենցիալ լուրջ խնդիր է: Կանոնակարգը սահմանում է, որ եթե որեւէ բան ճիշտ չի թվում, այդ մասին պետք է բարձրաձայնել: Եթե անհարմար եք զգում քննարկել դա Ձեր անմիջական ղեկավարի հետ, ապա խոսեք էթիկայի եւ կոմպլայենսի ստորաբաժանման կոլեգաների հետ, գրեք compliance@telecomarmenia.am հասցեին կամ առցանց հաղորդում ներկայացրեք https://speakup.telecomarmenia.am հասցեով: «Տելեկոմ Արմենիա»-ն կդիտարկի իրավիճակը եւ թույլ չի տա, որպեսզի Ձեր անմիջական ղեկավարը կամ որեւիցե մեկը հետապնդում իրականացնի Ձեր հանդեպ: Ճիշտը Ձեր մտահոգությունների մասին հայտնելն է:

էթիկայի և կոմպլայենսի բաժին

* * *

Սույն Վարվելակերպի կանոնակարգի դրույթների կատարման պարտականությունից ազատվելու կամ բացառություն կիրառելու հարցումները պետք է գրավոր կերպով ուղղվեն

էթիկայի եւ կոմպլայենսի հարցերով բաժնին: Տնօրենների եւ Գլխավոր տնօրենների դեպքում կատարման պարտականությունից ազատվելու խնդրանքները կարող են բավարարվել միայն Տնօրենների խորհրդի կողմից: Եթե կատարման պարտականությունից ազատվելու խնդրանքները բավարարվեն, ապա դրանք պատշաճ կերպով կբացահայտվեն՝ օրենքի պահանջներին համապատասխան:

ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Փաստաթուղթը վերանայման ենթակա է տարեկան առնվազն մեկ անգամ, փոփոխությունների իրականացման դեպքում՝ ոչ ուշ քան 15 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե քաղաքականության վերանայման արդյունքում պարզ է դառնում, որ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա՝ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է քաղաքականության կազմողների կողմից և հաստատվում «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ Գլխավոր Տնօրենի կողմից: